PSPS ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Southern California Edison-ը տրամադրում է ծրագրեր և ծառայություններ՝ Ձեզ օգնելու համար Հանրային անվտանգության էլեկտր աէներգիայի անջատումից (PSPS) առաջ, դրա ընթացքում և դրանից հետո: PSPS-ի մասին տեղեկությունների համար այցելեք sce.com/PSPS կայքը:

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՆՊԱՍՏԻ ԾՐԱԳԻՐ

Եթե Դուք գրանցված եք Բժշկական Բազային Նպաստի (MBL) ծրագրում, կարող եք օգնություն ստանալ՝ բժշկական սարքավորումների շահագործման ծախսերը փոխհատուցելու համար: PSPS-ի ընթացքում Ձեզ հետ կարող են նաև անձամբ կապ հաստատել Ձեր տանը, եթե մենք չկարողանանք կապ հաստատել Ձեզ հետ էլեկտրոնային փոստով, տեքստային հաղորդագրությամբ կամ հեռախոսազանգի միջոցով:

Եթե Դուք իրավասու չեք MBL ծրագրին մասնակցելու համար կամ սպասում եք հաստատման, լրացրեք ինքնահավաստագրման ձևը՝ PSPS-ի հետագա ծանուցումներ ստանալու համար՝ դրա մշակումից հետո մեկ տարվա ընթացքում: Այցելեք cloud.sce.com/self-certify կայքը:

Իմացեք ավելին և գրանցվեք՝ sce.com/MBL

Այցելեք մեր sce.com/OutageMap կայքը՝ պարզելու համար, թե արդյոք ապրում եք հրդեհի բարձր ռիսկի գոտում:

ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՍՆՈՒՅՈՒՄ

ՇԱՐԺԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ
ԲԱՐՁՐ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կրիտիկական Խնամքի Համար Մահեստային Մարտկոցի ծրագիրը տրամադրում է անվճար շարժական պահեստային մարտկոց՝ արտակարգ իրավիճակներում բժշկական սարքավորումները սնուցելու համար: Որակավորվելու համար Դուք պետք է գրանցված լինեք SCE-ի MBL ծրագրում և բնակվեք PSPS-ից տուժած տարածքում:

Իմացեք ավելին՝ sce.com/CCBB **կայքում**

ԶԵՂՉԵՐ

ՇԱՐԺԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԶԵՂՉԵՐ
PSPS-ԻՑ ՏՈՒԺԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եթե Դուք ապրում եք PSPS-ից տուժած տարածքում, կարող եք որակավորվել զեղչերի համար՝ շարժական էլեկտրակայանի կամ շարժական գեներատորի արժեքը նվազեցնելու համար: Կալիֆորնիայի Էներգիայի Այլընտրանքային Սակագների (CARE), Ընտանեկան Էլեկտրաէներգիայի Սակագների Օգնության (FERA) կամ Բժշկական Բազային Նպաստի ծրագրում գրանցված հաճախորդները կարող են ստանալ ավելի մեծ զեղչ որակավորված շարժական գեներատորների համար:

Իմացեք ավելին՝ marketplace.sce.com

Թարմացված է՝ 08/07/2026

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Համայնքային Ռեսուրսների Կենտրոնները (CRC) և Համայնքային Անձնակազմի Տրանսպորտային Միջոցների (CCV) կայաններն աջակցում են Ձեզ PSPS-ի և հասարակական անվտանգության այլ խոշոր միջադեպերի ժամանակ: Դուք կարող եք ստանալ տեղեկատվություն, թեթև նախուտեստներ և դիմացկունության հավաքածուներ, լիցքավորել Ձեր բջջային սարքերը և շարժական բժշկական սարքավորումները, ինչպես նաև ստանալ լեզվական աջակցություն: Հասանելի նաև լրացուցիչ աջակցություն հաշմանդամություն կամ հասանելիության և ֆունկցիոնալ այլ կարիքներ ունեցող հաճախորդների համար:

Իմացեք ավելին CRC/CCV տեղամասերի գտնվելու վայրերը և աշխատանքային ժամերը նշված են sce.com/OutageMap **կայքում**

ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երկարատև անջատումից տուժած հաճախորդների համար հասանելի են հյուրանոցային զեղչեր: Այցելեք sce.com/OutageMap կայքը՝ տեղական մասնակից հյուրանոցներ գտնելու համար:

Իմացեք ավելին՝ sce.com/hotel-discounts

ՍՆՆԴԻ ԲԱՆԿԵՐ

SCE-ն համագործակցում է տարածաշրջանային սննդի բանկերի հետ՝ Ձեզ աջակցելու PSPS-ի ընթացքում: Այցելեք sce.com/OutageMap կայք՝ Ձեր մոտ գտնվող մասնակից սննդի բանկերը տեսնելու համար:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԱՅԼ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

211

SCE-ն համագործակցում է 211-ի հետ՝ Ձեզ օգնելու PSPS-ից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո: PSPS-ի ընթացքում 211-ը տրամադրում է ուղղորդումներ ժամանակավոր կացարանի, տրանսպորտի և սննդի աջակցության համար: Դուք կարող եք նաև ստանալ արտակարգ իրավիճակներին պատրաստվածության կրթություն և MBL-ում գրանցման օգնություն:

Իմացեք ավելին Զանգահարեք 211, տեքստային հաղորդագրություն ուղարկեք 'PREPARE' բառով 211-211 համարին կամ այցելեք 211.org

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԺԵՂԵՐԻ ԼԵԶՎԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

PSPS ծանուցումները և պատրաստվածության մասին տեղեկատվությունը հասանելի են մատչելի ձևաչափերով կույր, թույլ տեսողություն ունեցող, Խուլ, Լսողության Խանգարում ունեցող կամ Խուլ-Կույր անձանց համար:

Իմացեք ավելին՝ sce.com/ASL

PSPS ԵՎ ԱՅԼ ԱՆՋԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Թարմացրեք Ձեր կոնտակտային տվյալները և ծանուցումների նախընտրությունները՝ ծանուցումներ էլեկտրոնային փոստով, տեքստային հաղորդագրությամբ կամ ձայնային զանգով ստանալու համար: Մուտք գործեք Ձեր SCE հաշիվ՝ sce.com/MyContacts կայքում: Ծանուցումները հասանելի են բոլոր տարածված լեզուներով և Ամերիկյան Ժեստերի Լեզվով:

Խնամակալները և այլ անձինք, ովքեր չունեն SCE հաշիվ, կարող են գրանցվել Հասցեների մասին Ծանուցումների համար sce.com/PSPSAlerts կայքում:

PSPS-ի ընթացքում կարող եք ստանալ մանրամասն տեղեկություններ անջատումների մասին sce.com/OutageMap կայքում կամ MySCE բջջային հավելվածում՝ sce.com/mobile-app հասցեով:

Հաշմանդամություն կամ հասանելիության և ֆունկցիոնալ այլ կարիքներ ունեցող հաճախորդների համար հասանելի ծրագրերի, ծառայությունների և ռեսուրսների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք sce.com/AFN կայքը:

Հաղորդագրությունները վճարվում են սակագներ վճարողների կողմից

SOUTHERN CALIFORNIA EDISON®